

# Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՏԱԿԱՆԸ — ԲԵՍԱԿԱՆԸ

\* Շր. 3 Եռեմիա.— Է. օր Հոգեգալստեան: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայրաքաղաքի տանիքը՝ Ս. Հոգւոյ մատրան մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Բակուր Արզ. Տառուերեան:

\* Կիր. 4 Եռեմիա.— Յիշատակ եղիայի Մարգարէին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Երուսթիմիան: Ժամարարն էր Հոգւ: Տ. Գրիգոր Արզ. Մուրադեան:

— Ս. Նովոսիպոլիսի Նախատանակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Հանդիսապէս արն էր Լուսարարապետ Գեորգ: Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Բշ. 5 Եռեմիա.— Ս. Կուսմանցն Հոփսիմեանց: Առաւօտեան ժամեղօրութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարազը մատուցուեցաւ եկեղեցիին ասանդատան՝ Ս. Նովոսիպոլիսի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Սիմեոն Վրզ. Միսեան:

\* Ար. 9 Եռեմիա.— Նախատանակին ի Ս. Եակոբ նախագահեց Գեորգ: Տ. Նորայր Եղս. Պոզարեան:

\* Շր. 10 Եռեմիա.— Ս. Զօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին (Էլն ի Վիրապէն): Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի ասանդատան մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Նուրան Արզ. Մանուկեան:

— Նախատանակին ի Ս. Եակոբ նախագահեց Լուսարարապետ Գեորգ: Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս: Ապս ծնարկը Երզնուցաւ «Տէր սորսեան»:

\* Կիր. 11 Եռեմիա.— Տօն Կարուղիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Մարտ Տաճարի Աստղ խորանին վրայ Ս. Պատարազ մատուց Հոգւ: Տ. Վիգէն Արզ. Այրազեան: «Հայր մեր»-ն ասալ, Լուսարարապետ Գեորգ: Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս նախագահեց վասն Ս. Էջմիածնի կառարուած «Հայրապետական Մաղթանք»-ի արարողութեան:

— Կնարէ Լաբ, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդատան»-ին նախագահեց Գեորգ: Տ. Նորայր Եղս.:

\* Շր. 17 Եռեմիա.— Ս. Մեծին Ներսէսի Հայրապետին եւ Խաղայ Եղիսիպոսին: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորի: Ժամարարն էր Հոգւ: Տ. Մուշկ Արզ. Քաշեան:

\* Կիր. 18 Եռեմիա.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Երուսթիմիան, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Եսայի Արզ. Պարսեան:

\* Ար. 23 Եռեմիա.— Ս. Լուսաւորչի Նշխարաց զիստ նախատանակին ի Ս. Եակոբ նախագահեց Գեորգ: Տ. Շահէ Եղս. Աճեմեան:

\* Շր. 24 Եռեմիա.— Գիւտ Նշխարաց Ս. Զօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, ուր, ասանդութեան համաձայն, թաղուած է մատուցող Ս. Լուսաւորչի: Ժամարարն էր Հոգւ: Տ. Սիմեոն Վրզ. Միսեան:

\* Կիր. 25 Եռեմիա.— Ս. Պատարազը մատուց-

ուեցաւ ի Ս. Երուսթիմիան, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Նուրան Արզ. Մանուկեան:

\* Դշ. 28 Եռեմիա.— Թարգմանչաց Հանդիսաւոր նախատանակին ի Ս. Եակոբ նախագահեց Լուսարարապետ Գեորգ: Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Էշ. 29 Եռեմիա.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Ըստ սովորութեան, Ս. Եակոբեանց Մայր Տաճարի Աստղ սեղանին վրայ պատարազեց Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Տեսուչը՝ Հոգւ: Տ. Կրիստոս Մ. Վրզ. Գարեթեան:

\* Շր. 1 Եռեմիա.— Ս. Տրդատայ քաղաքին մերոյ եւ Աշխէն տիկնոջն եւ Խոսրովիկոսոյն: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորի: Ժամարարն էր Հոգւ: Տ. Գեորգ Վրզ. Նազարեան:

— Նախատանակին ի Ս. Եակոբ նախագահեց Գեորգ: Տ. Նորայր Եղս. Պոզարեան:

\* Կիր. 2 Եռեմիա.— Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Կոյսի Ընծայման սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Սիմեոն Վրզ. Միսեան: Երթ ու զարձի թափարեկըր զիստուրեց Հոգւ: Տ. Կրիստոս Մ. Վրզ. Գարեթեան:

\* Շր. 8 Եռեմիա.— Ս. 12 առաքելոցն Քրիստոսի եւ Պողոսի՝ երեսնամերորդ առաքելոցն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Երզնակ Վրզ. Մամուր:

\* Կիր. 9 Եռեմիա.— Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Բակուր Արզ. Տառուերեան:

\* Ար. 14 Եռեմիա.— Լուսարարապետ Գեորգ: Տ. Հայրիկ Սարգս. Աստուան նախագահեց Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատրան մէջ՝ պաշտուած Տաղանակի նախատանակին:

\* Շր. 15 Եռեմիա.— Յիշատակ Տաղանակին Խրեշտակայն եւ տօն նորոյ Ս. եկեղեցւոյ: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Գեորգ Վրզ. Նազարեան:

— Այլակերպութեան տանի Հանդիսաւոր նախատանակին ի Ս. Եակոբ նախագահեց Աժեն. Պատրիարք Ս. Հայրը: Ապս կատարուեցաւ Տեսնեկրոր զահապատութեան տարեկարծին նուիրուած Հանդիսութիւն: Արարողութեանց ասարան՝ Միտրանութիւնը «Օրհնեցէր զՏէր» շարականի Երկեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

— Իրիկնոցէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» եւ Զսիման կարգեր: Հանդիսապետն էր Գեորգ: Տ. Նորայր Եղս. Պոզարեան:

\* Կիր. 16 Եռեմիա.— ՎԱՐՄԱՎԱՐ (Տօն Այլակերպութեան Տեսնեմ): Օրուան Հանդիսաւոր Ս. Պատարազը Մայր Տաճարի Աստղ սեղանին վրայ մատուց Աժեն. Պատրիարք Ս. Հայրը: Արարողութիւնները ձայնասփուռեցան խորտչիւան օտարխայանէն:

— Կնարէ Լաբ, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդատան»-ին նախագահեց Գեորգ: Տ. Նորայր Եղս. Պոզարեան:

\* Բշ. 17 Եռեմիա.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորի: Ժամարարն

էր Հոգւ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Ազա, Հոգւ. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Գարեհեանի նախադաճութեամբ հասարակցան հոգեհանգստեան կարգէր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա զաւթթր՝ երանաշնորհ Տ. Կիրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին վրայ:

\* Ար. 21 Յուլիս.— Նախատեսակին ի Ս. Յակոբ նախադաճեց Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրեկ Աբգ. Եղիսիսցոս Առանեան:

\* Շր. 22 Յուլիս.— Ս. Թաղէսի առաքելոյն մերոյ և Սանդիստոյ կուսին: Ս. Պատարազը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Սեւան Վրդ. Ղարեպեան:

\* Կիր. 23 Յուլիս.— Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսարբէշ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Նուրհան Աբգ. Մանուկեան:

\* Շր. 29 Յուլիս.— Ս. Որդեց և բոսանց Ս. Գր. Լուսարբի: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Հոգւ. Տ. Նուրհան Աբգ. Մանուկեան:

\* Կիր. 30 Յուլիս.— Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

\* Շր. 5 Օգոս.— Ս. Հայրապետացն՝ Աբանասի և Կիրեղի: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Գր. Լուսարբի: Ժամարարն էր Հոգւ. Տ. Սեւան Վրդ. Ղարեպեան:

\* Կիր. 6 Օգոս.— Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Սեւան Վրդ. Ղարեպեան:

\* Շր. 12 Օգոս.— Ս. Գրիգորի Աստուածարանին: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Հոգւ. Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան:

\* Կիր. 13 Օգոս.— Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Ս. Պատարազէն ևսր հասարակցու «Ստղոսորհնէք»ի աւանդական արարողութիւնը, նախադաճութեամբ Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրեկ Աբգ. Մանուկեանի:

\* Գշ. 15 Օգոս.— Այսօր սկսաւ Ս. Աստուածածնայ Վերափոխման ամբ կանխող ամէնօրեայ հանդիսարար Ս. Պատարազներու մատուցումը՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

\* Շր. 19 Օգոս.— Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

\* Կիր. 20 Օգոս.— Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: Ս. Պատարազը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

\* Ար. 25 Օգոս.— Նախատեսակը պաշտուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Շահէ Եղս. Աճէմեան:

\* Շր. 26 Օգոս.— Տօն Շաղկապի Ս. Էջմիածնի: Ս. Պատարազը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

մանին վրայ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան:

— Կէսօրէ ևսր ժամը 3:15ին, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրեկ Աբգ. Մանուկեանի զխաւորութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի ձոր ու «Հրեշտակապետ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան Էրեկիսեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանգստեան նախատեսակը:

— Ժամը 7իւ, նոյն Եկեղեցիին մէջ հասարակցան «Եկեղեցի»ի և Հսկման կարգէր, ու ապա դիւրային և աստուական ժամերգութիւններ: Հանդիսապետն էր Հոգւ. Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան:

\* Կիր. 27 Օգոս.— ՎԵՐԱՓՈՒՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒՍԱՆԵՆԻ: Աստուական ժամը 6:30ին, դարձեալ Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրեկ Աբգ. Մանուկեանի զխաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանիի ձոր ու «Հրեշտակապետ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսարար Ս. Պատարազը մատուց և հակիրճ քարոզ մը խօսեցաւ Գերշ. Հանդիսապետ Աբրաքանը, շեւտեով տօնարար կնի՞ք և ստորա մօր դերերը Ս. Կոյնի նկարագրին մէջ: Ազա հասարակցու «Ստղոստան»:

— Կէսօրէ ևսր, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ստղոստան»ին, ժամերգութեան և նախատեսակին նախադաճեց Գերշ. Տ. Նորայր Եղս. Պոպրեան:

\* Բշ. 28 Օգոս.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարազը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Սեւան Վրդ. Ղարեպեան: Ազա, Հոգւ. Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեանի նախադաճութեամբ, հասարակցու հոգեհանգստեան կարգէր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա զաւթթր՝ երանաշնորհ Տ. Կիրեղ Ս. Պատրիարք Հօր շիրմին վրայ:

\* Շր. 2 Սեպտ.— Է. օր Վերափոխման: Ս. Պատարազը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան:

\* Կիր. 3 Սեպտ.— Ը. օր Վերափոխման: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսարբէշ Եկեղեցիին մէջ: Ըստ սոյնօրութեան, պատարազիչն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգւ. Տ. Վաղարշ Վրդ. նաշտուեան:

\* Բշ. 4 Սեպտ.— Նախատեսակին ի Ս. Յակոբ նախադաճեց Գերշ. Տ. Նորայր Եղս. Պոպրեան:

\* Գշ. 5 Սեպտ.— Ս. Յովակիմայ և Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի և Կանանց իւզարբից: Ս. Պատարազը՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմի զգեզմանին վրայ մատուց Հոգւ. Տ. Նարեկ Վրդ. Մարքազլիան: Երթ ու գարձի թափօրները զխաւորեց Հոգւ. Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան:

\* Շր. 9 Սեպտ.— Ս. Առաքելոյն Թովմայի, Յակոբայ և Շմաւոնի: Ս. Պատարազը մատուցուցաւ ի Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գերեզմ Մ. Վրդ. Չարաբեան:

— Նախատեսակին ի Ս. Յակոբ նախադաճեց Գերշ. Տ. Նորայր Եղս. Պոպրեան:

\* Կիր. 10 Սեպտ.— Գիւտ Գօմոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարազը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

բեղմանին վրայ: Ժամարարն էր Հոգչ: Տ. Սիփան Վրդ. Մխական: Երթ ու դարձի թափորները զլիսաւորից Լուսարարայեա Գերշ: Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Առանձեան:

\* Ծր. 16 Սեպտ.— Եկիկոյ Ս. Ժողովոյն (325): Ս. Պատարարք մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիք: Ժամարարն էր Հոգչ: Տ. Վիգէն Արդ. Այրազեան:

\* Կիր. 17 Սեպտ.— Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարարք մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգչ: Տ. Մուշեղ Արդ. Թաճեան:

\* Գշ. 20 Սեպտ.— Ս. Կոյրի ծննդեան հանդիսարար նախատանակին ի Ս. Յակոբ նախաղանց Գերշ: Տ. Ծաճէ Եպո. Աճէմեան:

\* Եշ. 21 Սեպտ.— Կնուիկ Ս. Աստուածամկնի յԱննայէ: Աստուածն, Գերշ. Տ. Ծաճէ Եպիսկոպոսի զլիսաւորութեամբ, Մխարան Հայրեր ինքնաւարժեւորով մեկնեցան Գեթնեանի մարք ու շարժափառով մուտք գործեցին Ս. Աստուածամկն Տաճար, ուր Տրիստոր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսարար Ս. Պատարարք մատուց Գերշ. Հանդիսարար Արքադանը:

\* Ծր. 23 Սեպտ.— Տօն Եկեղեցւոյ ի Յուսիպտիս Ս. Խաչին: Ս. Պատարարք մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիք: Ժամարարն էր Հոգչ: Տ. Նարեկ Վրդ. Մարթաղէշեան:

— Խաչիկեացի մեծահանգէս նախատանակին ի Ս. Յակոբ նախաղանց Գերշ. Տ. Ծաճէ Եպո. Աճէմեան, որ ապա Ս. Խաչափայտի մատուցք թափորով փոխադրեց Ապոլ Սեպտ: Անկէ ետք կատարեց սաբիաւագական կոչման արարողութիւնը Ուրարակի Տրք. Պետրոս Սարգիսեանի և Ուր. Տրք. Համարձում Պայեանի:

— Գիշերակիցիին, Մայր Տաճարին մէջ պաշարուեցան «Եկեղեցի» և Լսկման արարողութիւններ: Հանդիսարարն էր Գերշ. Տ. Նորայր Եպո. Պողոսեան:

\* Կիր. 24 Սեպտ.— ՏՕՆ ՎԵՐԱՅՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ: Օրուան հանդիսարար Ս. Պատարարք՝ Մայր Տաճարի Ապոլ Սեպտին վրայ մատուց Գերշ. Տ. Ծաճէ Եպո. Աճէմեան, որ և կատարեց Սարիսպազական ձեռնարկութիւն: «Հայր Եւթըն» առջ, ըստ սովորութեան, Լուսարարայեա Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասրանեանի զլիսաւորութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսարար պաշտօն՝ Ս. Աթոռոյ և Աղղիս բարեբարներ կարպեա և Գրիգոր Մելիգոնեան երաջրներու հողերուն համար: Արարողութիւնները ձայնափողուեցան խրաչլիւսեան ուստիականէն:

— Կէսօրէ ետք, Խաչիկեացի մեծահանգէս Անդատանին ի Ս. Յակոբ նախաղանց Լուսարարայեա Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո. Առանձեան:

\* Բշ. 25 Սեպտ.— Յիշատակ մեծեցոյ: Ս. Պատարարք մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիք: Ժամարարն էր Հոգչ: Տ. Գիսակ Արդ. Մուրատեան: Ապա, Լուսարարայեա Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս նախաղանց հոգեհանգստեան պաշտամունքին:

\* Ծր. 30 Սեպտ.— Տօն Խաչի: Ս. Պատարարք մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամասերուն մէջ: Ժամարարն էր Հոգչ: Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան:

\* Կիր. 1 Հոկտ.— Բարեկենդան վարագայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարարք մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգչ: Տ. Խաճակ Արդ. Պայրամեան:

\* Ուր. 6 Հոկտ.— Նախատանակը պաշտուեցաւ Ղարտինբու Ս. Գեորգ Եկեղեցիին մէջ: Հանդիսարարն էր Գերշ. Տ. Նորայր Եպո. Պողոսեան:

\* Ծր. 7 Հոկտ.— Ս. Գեորգայ գորավարին: Ըստ սովորութեան, Ս. Պատարարք մատուցուեցաւ Ղարտինբու Ս. Գեորգ Եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգչ: Տ. Գեղամ Կ. Վրդ. Չարաբեան, որ և քարոզեց, ընթան ունենալով օրուան ճաշու Անտարանէն «Մի՛ դարձուրք յայնչանէ որք սպանանեն դմարժին» բացատրելով զոչոյ իմաստները «սուրբ» բառին: Երթ ու դարձի թափորներու հախաղանց Հոգչ: Տ. Հայրապետ Վրդ. Պայրամեան: Արարողութեանց ուսարարն, Մխարանութիւնը պատուասիրուեցաւ Ղարտինբու վանքի Հոգեհանգ՝ Տեաչէն:

— Կէսօրէ ետք, Լուսարարայեա Գերշ. Տ. Հայրիկ Արքեպո. Առանձեանի զլիսաւորութեամբ, Մխարանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան Երեկոյեան Ժամերգութիւնն ու Վարագայ Խաչի նախատանակը՝ Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբապեղեց կայելութեան հանդիսարար թափոր Տաճարէն ներս: Թափորայեան էր Տաճարին Տեսուչը՝ Հոգչ: Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան:

\* Կիր. 8 Հոկտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին: Գիշերային և առաստեան Ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ: Ապա, Լուսարարայեա Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս մատուց օրուան հանդիսարար Ս. Պատարարք Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: «Հայր մեր»-էն առաջ, Աճէն. Պատարարք Ս. Հօր նախաղանցութեամբ, կատարուեցաւ «Հայրապետական Մտաթան» Աճէնայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վաղգէ Ա. Ի օժման 17րդ տարեդարձին առթիւ:

— Իսկ Բէժէի մէջ, Ս. Գեորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնն ու մատարոհներ կատարուեցան անակապան հանդիսարարութեամբ և նախաղանցութեամբ սեղանին Տեսուչ՝ Հոգչ: Տ. Պարէա Վրդ. Երեցեանի: Ս. Պատարարք մատուց Հոգչ: Տ. Վիգէն Արդ. Այրազեան, իսկ Հոգչ: Տ. Գեղամ Կ. Վրդ. Չարաբեան խառնեցաւ հոգեհանգստեան պաշտամունքի իմաստին շուրջ:

\* Ծր. 14 Հոկտ.— Ս. 72 աշակերտաց Գրիստոսի: Ս. Պատարարք, Մայր Տաճարի ներքին դուրբը՝ Ս. Գեորգայ սեղանին վրայ մատուց Հոգչ: Տ. Սիփան Վրդ. Մխական:

\* Կիր. 15 Հոկտ.— Ս. Պատարարք մատուցուեցաւ ի Ս. Հրէշտակապետ: Ժամարարն էր Հոգչ: Տ. Վիգէն Արդ. Այրազեան:

\* Ուր. 20 Հոկտ.— Թարգմանչաց հանդիսարար նախատանակին ի Ս. Յակոբ նախաղանց Գերշ. Տ. Նորայր Եպո. Պողոսեան:

\* Ծր. 21 Հոկտ.— Ս. Թարգմանչաց վարդապետաց մերոց (Տօն սղոյսից և Եկեղեցական): Մայր Տաճարի Ապոլ Սեղանին վրայ պատարարեց Ս. Էջմիածնի Մխարան և Թաճարայեան Տրիստոր Ս. Աթոն Ժամածած Հոգչ: Տ. Չարճէ Կ. Վրդ. Պարսեան, որ նաև քարոզեց թարգմանիչ վարդապետներու գործին շուրջ, յայտնելով նաև իր բարեպաշտական խորունկ զգացումները Ս. Երկիր իր առաջին այցելութեան աւերիթով, ինչպէս նաև իր խոր դժահատանքը հանգել կրթական այն գործին՝ որ յառաջ կը տարուի Ս. Յակոբի հովանիին ներքեւ Աճէն. Պատարարք Ս. Հօր իմաստուն ղեկավարութեամբ, և որ շարունակութիւնն է Թարգմանչաց շարժումով սկսած մեծ

գործին: Ս. Պատարագ Էն Լաք, Գերշ. Տ. Ծա՛ճ Եղիս-  
կազմի գլխաւորութեամբ կատարուեցաւ Հոգեհան-  
գանական շնորհատու պաշտամունք՝ Ս. Աթոսոյս և  
ազգիս մեծանուն բարերար Գալուստ Կիլիկիականի  
ինչպէս նաեւ իր արկիւմը և ճնշոցն Հոգիներուն հա-  
մար:

\* Կիր. 22 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուե-  
ցաւ ի Ս. Գարուբիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին  
մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մուշեղ Վրդ. Թա՛ճ-  
Լան:

\* Ծր. 28 Հոկտ.— Ս. Չորից Աւետարանաց առ-  
նին առթիւ այս տարի ևս Ս. Պատարագ մատուցանելու  
կարելի չեղաւ Ս. Գարուբիւն գոթի Ս. Յովնանէս  
Աւետարանչի մատրան մէջ, բակր լեցուած բլլայով  
նորագութեանց շինուածանիթերով: Փոխարէն՝ Ս.  
Պատարագ մատուցուեցաւ Ս. Գլխաղբի մատրան մէջ:  
Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրած-  
Լան:

\* Կիր. 29 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուե-  
ցաւ ի Ս. Գահր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գիսակ  
Արդ. Մուրառեան:

\* Բշ. 30 Հոկտ.— Ս. Յովսէփայ Աստուածսոր  
անին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթե-  
մանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Եով-  
սէփի գերեզմանին վրայ: Ընկալեալ սոսորութեան  
համաձայն արարողութեանց կր նախագահէր Ժամորշ-  
նոզը, Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր, իսկ պատա-  
րագին էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Մուշեղ Արդ.  
Թա՛ճԼան:

Պ Ա Շ Տ Օ Լ Ս Կ Ա Լ Ե

\* Եշ. 29 Յունիս.— Կէսորէ Լաք, ընդաստիճակով  
Պապական Կատարակ Մոնս. Փիս Լակիի հրաւերին,  
Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ  
Հոգշ. Տ. Կրիսեղ Մ. Վրդ. Գարիկեանի, ներկայ գրա-  
նուեցաւ Լատինաց Պատրիարքարանի Եկեղեցիին մէջ,  
և Ս. Պողոս Զ. Պապին զահալայութեան Յրդ տարե-  
գործին և անուան տօնին առիթներով, նորին Գերա-  
պատուութիւն Մօնսինեօրին կողմէ մատուցուած  
հանդիսաւոր Ս. Պատարագին և անոր յաջորդող  
Մագիանքին՝ որուն նախագահնց Լատինաց Պատրիարք  
Մոնս. Տ. ճիսարձօ Պէլլիթիթի:

\* Ար. 14 Յուլիս.— Երեկոյեան, Ֆրանսայի ազ-  
գային տօնին առթիւ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատո-  
սին կողմէ Հիւպատոսարանին մէջ սարքուած ընդու-  
նելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Պատրիարք Ս.  
Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Սիմօն Վրդ. ի  
և Տիար Կարպիս Հիդիլեանի:

\* Ար. 4 Օգոս.— Ս. Ախախ միարաններէն  
Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրածեան վերադարձաւ  
Ս. Աթոս, սասանեմէկ տարուան բացակայութենէ  
ետք:

\* Ար. 25 Օգոս.— Ս. Ախախ միարաններէն

Հոգշ. Տ. Աւետի Կրդ. Սամուգեան Ամերիկայէն ժա-  
մանեց Ս. Աթոս: Հոգշ. Հայր սարքը իր շարթուան  
մը այցելութեան աւարտին ընդունեց Տայրագոյն  
վարդապետութեան աստիճանները Ամեն. Պատրիարք  
Ս. Հօրմէն, Հիդիլեանի, 31 Օգոստոսի կէսօրէն վերջ,  
Մայր Տաճարին մէջ:

\* Բշ. 4 Սեպտ.— Այս սասան վերադարձուեցաւ  
Ս. Քարգմանչաց Երկրորդական վարժարանը, ամաս-  
նային Լատինայ արձակուրդէն ետք:

\* Գշ. 5 Սեպտ.— Ս. Ախախ միարաններէն  
Հոգշ. Տ. Նուրճան Արդ. Մանուկեան մեկնեցաւ Զը-  
բիցերիս, սասանելու:

\* Եշ. 7 Սեպտ.— Ս. Ախախ միարան Հոգշ. Տ.  
Գեղամ Մ. Վրդ. Զարբեան վերադարձաւ Հեղկաստա-  
նէն, ութ տարինէր արդիւնաւոր կերպով հովուելէ  
ետք Կալիֆոռնիա Հայ համայնքը:

\* Կիր. 10 Սեպտ.— Կէսորէ աստ՛, Հոգշ. Տ.  
Կրիսեղ Մ. Վրդ. Գարիկեան և Հոգշ. Տ. Գիսակ Վրդ.  
Մուրառեան ներկայ գտնուեցան Ռուսաց Եկեղեցիին  
մէջ, Մոսկուայի և Համբարն Ռուսիայ Պատրիարք  
Ամեն. Տ. Պիմէնի անուան տօնին առթիւ մատուցուած  
հանդիսաւոր Ս. Պատարագին և անոր յաջորդող ըն-  
դունելութեան:

\* Բշ. 18 Սեպտ.— Աւաստուն, Ամեն. Պա-  
րիարք Ս. Հայրը, Միարանութեան անդամներուն ըն-  
կերակցութեամբ, բացումը կատարեց ժամանակաւ-  
րաց Վարժարանի և Ընծայարանի 1972—73 դպրացու-  
կան տարեւոյնին:

\* Գշ. 27 Սեպտ.— Հրէից Տաղաւարահարց առ-  
նին առիթով, Կէսորէ Լաք, Քաղաքացեալ Վսեմ. Թէ-  
սի Քոլլէջի կողմէ Գոթի բերդին մէջ տրուած ընդու-  
նելութեան ներկայ եղան Գիւանապետ Գերշ. Տ. Ծա՛ճ  
Եղաւ Ամէմեան, Հոգշ. Տ. Պարէա Վրդ. Երեցեան և  
Տիար Կ. Հիդիլեան:

\* Գշ. 18 Հոկտ.— Ս. Էջմիածնի միարան և Ռու-  
մանիոյ Հայաց Առաջնորդի օգնական Հոգշ. Տ. Զարեհ  
Մ. Վրդ. Պարանեան ժամանեց Ս. Աթոս, ուր մնաց  
սաս օրեր:

\* Բշ. 23 Հոկտ.— Ս. Ախախ միարան Հոգշ. Տ.  
Լեւոն Վրդ. Արէլեան Ամերիկայէն ժամանեց Ս. Ա-  
թոս և մեկնեցաւ քանի մը օրեր ետք:

\* Եշ. 23 Նոյմ.— Ռուսաց նոր մեծաւոր Արշի-  
մանարիթ Քիճմէնթի պաշտօն ստանձնելուն առթիւ,  
Երեկոյեան, Ռուսաց վանքի մէջ տրուած ընդունելու-  
թեան ներկայ գտնուեցաւ Լուսարարացեալ Գերշ. Տ.  
Հայրիկ Արք. Առանեան, ընկերակցութեամբ Հոգշ.  
Տ. Կրիսեղ Մ. Վրդ. Գարիկեանի և Աւագ Քարգման  
Հոգշ. Տ. Սիմօն Վրդ. Միսեանի:

\* Եշ. 30 Նոյմ.— Հոգշ. Տ. Սիմօն Վրդ. Միս-  
եան մեկնեցաւ Գալիֆօրնիայ Սան Ֆրանսիսկօ քաղա-  
քը, ստանձնելու համար հովուութիւն տեղւոյն Հայ  
համայնքին: Իր անկը Աւագ Քարգման կարգուեցաւ  
Հոգշ. Տ. Վիգէն Արդ. Այլապեան: